

բանաստեղծության ազգային ինքնության դրսևորումը չէ. այդպիսի լիարժեքության բանաստեղծը կարող է հասնել միայն «անձուկեն, սահմանափակեն» ազատվելու, ընդհանուրին ու նաև՝ տիեզերականին հաղորդակցվելու ճանապարհով: Վարուժանը այդ սահմանագիծը նվաճում է «Հեթանոս երգերով»: Ստեղծագործական վերածնության այս հրաշքի մեջ քննադատն էական տեղ է հատկացնում բանաստեղծի ստացած կրթությանը, եվրոպական մշակույթի հետ նրա շփումներին, «Ռյուպենսի, Վանտիքի, Ժոռտայենսի անվրեպ ազդեցությանը»: Դա վերաբերում է «Հեթանոս երգերի» հատկապես այն էջերին, ուր «հնության վերաբերումը... ազգային զգացման մաս չէ կազմեր», այլ ձեռք է բերում ընդհանուր մարդկային բովանդակություն ու արժեք: Հայ բանաստեղծը երգում է «բնության համաստվածությանը հետ նույնացումը», «հանճարային թռիչք մը դեպի բնության ստեղծագործ հանճարը», «գեղեցկության պաշտամունքը», այսինքն՝ «վանկի, բառի, ձայնի հետևաբար և պատկերի միջոցով կը ցայտեցնեն այն բոլորը, ինչ որ երանգի, դիրքի, և շարժումի հավիտենական ձևերուն միջոցով կտավներու վրա անմահացուցին Ռյուպենս և Ժոռտայենս»: Այս տրամաբանությամբ Չյոկյուրյանը վճռականորեն առարկում է Վարուժանի պատկերներում «տրփական» երանգներ տեսնող քննադատներին, մասնավորապես Շիրվանզադեին:

Սակայն «Հեթանոս երգերի» մասին քննադատի դիտողությունների մեջ ամենաէականն այն է, որ այստեղ վերադարձ է տեսնում դեպի հայ հնագույն մշակույթի, ժողովրդական բանահյուսության կենսահաստատ ակունքները: Այս միտքը շեշտվում է հատկապես, երբ խոսքը վերաբերում է բնության զգացողությանը, գրքի այն էջերին, «ուր բնությունը իր շքեղ ամբողջութենեն մաս մը դրած» է՝ իբրև «մտածումը կամ զգացումը լուսավորող սիմպոլ մը»: քննադատը սա ընդունում է որպես ազգային մշակույթի հատկանիշ, որ բնորոշ է «մեր ժողովրդական բանահյուսությանը», «մեր դասական նախնյաց գործերին». «Մեր ժողովրդական քերթության մեջ մանավանդ, գրեթե չկա տող մը, ուր սիրո կամ զգացմանց բնական նմանություն մը չընդխառնվի, ուրեմն ինչ որ կրնար թերություն համարվիլ Վարուժանի համար իբր ծանրացնող իր ոճը՝ ցեղային հատկանիշ մըն է»:

Մյուս բանախոսը Էդ. Գոլանճյանն է, որի ընդարձակ բանախոսության մեջ ուշագրավ նկատառումներ կան Վարուժանի բանաստեղծական աշխարհի, մասնավորապես «Հեթանոս երգերի»